

Անհատական խնամքի Հաստատությունների Վերաբացման Արձանագրություն: Հավելված R

Վերջին փոփոխություններ.

9/17/20: Փակ տարածքներում թույլ է տրվում կատարել միայն բժշկի կողմից պահանջվող մերսման կամ էլեկտրոլիզի ծառայություններ, որոնք նշանակվում են բժիշկ-պրակտիկանտի կողմից, այն պայմանով, որ հետևեն սույն արձանագրության մեջ նկարագրված բացօթյա տարածքներում իրականացվող անձնական խնամքի ծառայությունների համար պահանջվող միևնույն պաշտպանության միջոցներին:

9/21/20: Վերացվել է շարժական ծառայություններից օգտվելու սահմանափակումը, սակայն այդ ծառայությունները պետք է մատուցվեն բացօթյա տարածքներում:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը, գիտական և հանրային առողջապահության փորձագիտական աջակցությամբ, որդեգրում է աստիճանական մոտեցում՝ թույլ տալու որոշ բիզնեսների ապահով վերաբացումը: Ներքոհիշյալ պահանջները մասնավորեցված են անհատական խնամքի ծառայությունների համար, որոնք պահանջում են դիպչել հաճախորդի դեմքին կամ մարմնին: Նահանգի Առողջապահության Պատասխանատուի ներկայացրած պահանջներից բացի, բիզնեսներն ու պրակտիկ աշխատողները պետք է նաև համապատասխանեն բոլոր կիրառելի օրենքներին, ներառյալ՝ այս Արձանագրության մեջ նկարագրված բոլոր պայմաններին:

Ծառայությունները պետք է մատուցվեն բացօթյա պայմաններում: Այն ծառայությունները, որոնք հնարավոր չեն մատուցել բացօթյա տարածքում, պետք է դադարեցվեն, մինչև շինությունների ներսում գործունեությունը կթույլատրվի վերսկսել: Բացօթյա մատուցվող բոլոր տեսակի վարսավիրական կամ կոսմետոլոգիական ծառայությունները պետք է հաստատվեն հավաստագրող գործակալության՝ [Կալիֆորնիայի Վարսահարդարների և Կոսմետոլոգների Խորհրդի](#) կողմից: Բացօթյա մատուցվող անձնական խնամքի բոլոր ծառայությունները պետք է համապատասխանեն տեղական թույլատրող գործակալության պահանջներին և տեղական, շրջանային և/կամ նահանգային կանոնակարգերին կամ օրենքներին: Էլեկտրոլիզիական ծառայություններ, դաջվածքի ծառայություններ, միկրոբլայդերներ և մշտական դիմահարդարման և պիրսինգի ծառայություններ մատուցողներին չի թույլատրվում բացօթյա գործել, քանի որ դրանք ինվազիվ ընթացակարգեր են, և պահանջում են վերահսկվող հիգիենիկ միջավայր՝ անվտանգ իրականացնելու համար:

Փակ տարածքում թույլ է տրվում իրականացնել միայն բժշկի կողմից պահանջվող մերսման կամ էլեկտրոլիզի ծառայություններ, այն պայմանով, որ հետևեն սույն արձանագրության մեջ նկարագրված բացօթյա տարածքներում իրականացվող անձնական խնամքի ծառայությունների համար պահանջվող միևնույն պաշտպանության միջոցներին:

Անձնական խնամքի ծառայությունները ներառում են Եթետիկական, մաշկի խնամքի և կոսմետոլոգիական ծառայությունները, **ոչ-բժշկական** էլեկտրոլիզի; մատնահարդարման սրահները, մարմնի արվեստի մասնագիտական ծառայությունները, դաջվածքի սրահները, միկրոբլայդերներ և մշտական դիմահարդարումը; պիրսինգի սրահները; և մերսումներով թերապիան (ոչ առողջապահական հաստատություններում):

Վարսահարդարման սրահներն ու վարսավիրանոցները պետք է ենթարկվեն վարսահարդարման սրահների ու վարսավիրանոցների մասին արձանագրությանը:

Խնդրում ենք նկատի ունենալ. Սույն փաստաթուղթը կարող է վերանայվել հավելյալ տեղեկությունների և աղբյուրների հայտվելուն զուգահեռ, ուստի պարբերաբար ստուգեք Լոս Անջելեսի շրջանի վեբ կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ սույն փաստաթղթի և կից ուղեցույցների վերանայումների համար:

Այս ցուցակն ընդգրկում է.

- (1) Աշխատատեղի քաղաքականություն ու գործելակերպ՝ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
- (2) Ֆիզիկական հեռավորություն ապահովող միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկողություն ապահովող միջոցառումներ
- (4) Հաղորդակցություն աշխատակիցների և հասարակության հետ
- (5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է հաշվի առնվեն ձեր հաստատության կողմից վերաբացման ցանկացած արձանագրության մշակման ժամանակ:

Այս արձանագրության մեջ ներառվող բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ներքոհիշյալ բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ իրենց բիզնեսի համար:

Բիզնեսի անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Նախկին առավելագույն տարողությունը _____

Այցելուների թույլատրվող քանակը՝ ըստ տարողության 50% սահմանափակման _____

A. ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ)

- Տևից աշխատելու հնարավորություն ունեցող բոլոր աշխատակիցներին հրահանգվել է աշխատել տնից: Սա չի վերաբերում այն ծառայություններին, որոնք, ըստ օրենքի, պետք է իրականացվեն թույլատրված վայրում:
- Խոցելի խմբում գտնվող աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի, խրոնիկական առողջական խնդիրներ ունեցողներին, հղիներին) հնարավորության դեպքում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր կլինի կատարել տնից: Իրենց մտահոգությունները նրանք պետք է քննարկեն իրենց բուժաշխատողի կամ մասնագիտական առողջապահական ծառայության հետ՝ աշխատավայր վերադառնալու համապատասխան որոշումներ կայացնելու համար:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ լինելու կամ COVID-19-ով վարակված անձի հետ

շփում ունենալու դեպքում չգնալ աշխատանքի: Աշխատակիցները պետք է գիտակցաբար հետևեն Առողջապահության Վարչության՝ ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե այն կիրառելի է: Աշխատավայրում արձակուրդի քաղաքականությունները վերանայվել և փոփոխվել են՝ համոզվելու, որ աշխատողները չեն տուգանվում, եթե հիվանդության պատճառով մնում են տանը:

- ❑ Աշխատակիցների տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստներ մասին, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ՝ հիվանդության հետևանքով բացակայությունների կառավարական [ծրագրերի](#) օժանդակության և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների կողմից Կորոնավիրուսի առաջին արձագանքի Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և COVID-19-ի աշխատանքի հետ կապված կանխավարկածը՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր հրամանի](#):
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների/պրակտիկանտների, անկախ կապալառուների, ժամանակավոր աշխատողների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է տեղում ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի «հիվանդ(ներ)ը» մեկուսանան տանը, ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտինի ենթարկվեն: Գործատուի ծրագիրը պետք է ներառի COVID-19-ի թեստավորման հասանելիություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես հանրային առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու մասին](#):
- ❑ Եթե սեփականատերը, կառավարիչը կամ օպերատորը 14 օրվա ընթացքում տեղեկանում է COVID-19-ի երեք (3) կամ ավելի դեպքերի մասին, ապա գործատուն պետք է այդ բռնկման մասին հաղորդի Յանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարների միջոցով: Եթե աշխատավայրում հայտնաբերվեն մի շարք դեպքեր, Յանրային Առողջապահության Վարչությունը կարձագանքի այդ մի շարք դեպքերին, որը կներառի վարակի վերահսկման ուղեցույցի և հանձնարարականների տրամադրում, տեխնիկական աջակցություն և աշխատավայրին հատուկ վերահսկման միջոցառումներ: Յանրային Առողջապահության գործերի կառավարչին կհանձնարարվի տվյալ մի շարք դեպքերի ուսումնասիրությունը, որպեսզի նա օգնի և ուղղություն ցույց տա հաստատությանը:
- ❑ Կիրառվում են այլընտրանքային, հաջորդական կամ հերթափոխային գրաֆիկներ՝ ֆիզիկական հեռավորության հնարավորությունը առավելագույնի հասցնելու համար:
- ❑ Աշխատողներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդային նպաստների վերաբերյալ, որոնք աշխատողը կարող է ստանալ, ինչը ֆինանսապես ավելի հեշտ կդարձնի տանը մնալը՝ ներառյալ աշխատակցի հիվանդության արձակուրդի իրավունքները՝ համաձայն Ընտանիքներին Վերաբերող Կորոնավիրուսի Առաջին Արձագանքի Մասին Օրենքի:
- ❑ Բոլոր աշխատակիցներին հանձնարարվել է բուժօգնություն ստանալ, եթե իրենց ախտանշանները ծանրանում են, այդ թվում՝ կրծքավանդակում մշտական ցավի կամ ճնշման, շփոթմունքի կամ կապտավուն շրթունքների կամ դեմքի առկայության դեպքում:
- ❑ [Աշխատակիցների ստուգումները](#) իրականացվում են նախքան աշխատակիցների մուտքն աշխատավայր: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք աշխատակիցը նախորդ 14 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված մարդու հետ: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Յանրավորության

դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:

- Աշխատակիցներին, ովքեր ուրիշների հետ են շփվում, անվճար տրամադրվում են համապատասխան դեմքի ծածկոցներ, որոնք ծածկում են քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում կրի դեմքի ծածկոցը, երբ շփվում է կամ հավանական է, որ կշփվի ուրիշների հետ: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է օգտագործվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրելու, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ պինդ միջնապատերով առանձնացված աշխատախցում են, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակին կանգնած ժամանակ:
- Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխարինել իրենց դեմքի ծածկոցները:
- Աշխատակիցներին տրամադրվում են դեմքի վահաններ, որոնք նրանք կրում են հաճախորդներին ծառայություն մատուցելիս, երբ անհրաժեշտ է անձնական ծառայություն տրամադրելու նպատակով հեռացնել հաճախորդի դիմակը: Դեմքի վահանը պետք է կրվի որպես լրացում դեմքի կտորե դիմակին: Կտորե դիմակները պաշտպանում են այլ մարդկանց դիմակը կրողի կաթիլներից, իսկ դեմքի վահաններն օգնում են պաշտպանել այն կրողին այլ մարդկանց կաթիլներից:
- Դեմքի վահանները պետք է օգտագործվեն, մաքրվեն և ախտահանվեն ըստ արտադրողի ցուցումների:
- Աշխատողները պետք է լվանան կամ ախտահանեն ձեռքերը դիմակներն օգտագործելուց կամ ուղղելուց առաջ և հետո:
- Աշխատողները պետք է խուսափեն աչքերին, քթին և բերանին դիպելուց:
- Աշխատողներին հանձնարարվում է ամեն օր լվանալ իրենց դիմակները:
- Անկախ կապալառուներին ու ժամանակավոր աշխատողներին պատշաճ կերպով սովորեցնում են այս արձանագրությունները, և նրանք ունենում են անհրաժեշտ կտորե դիմակներ և անձնական պաշտպանիչ միջոցներ: Բիզնեսի սեփականատերերը պետք է քննարկեն այս արձանագրությունները այն կազմակերպության հետ, որը տրամադրում է անկախ կապալառուներ և/կամ ժամանակավոր աշխատողներ, նախքան նրանց՝ աշխատանքի վերադառնալը:
- Աշխատանքային բոլոր կայաններն առանձնացված են առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ:
- Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ անել՝ իրենց ձեռքերն օճառով ու ջրով լվանալու համար: Աշխատակիցները պետք է օճառով շփեն իրենց ձեռքերն առնվազն 20 վայրկյան:
- Ընդմիջումների տարածքները, զուգարանները և ընդհանուր օգտագործման այլ տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.
 - Ընդմիջումների տարածքները - _____
 - Չուգարաններ _____
 - Այլ _____
- Ընդմիջումները կազմակերպվում են հաջորդաբար՝ համոզվելու, որ աշխատակիցները ընդմիջումների սեյակներում ամբողջ ժամանակ կարող են միմյանցից պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- Հաստատությունը համապատասխանում է բացօթյա աշխատողների համար ջերմային հիվանդությունների կանխարգելման Cal/OSHA ստանդարտին, ներառյալ՝ ջերմային հիվանդությունների կանխարգելման արդյունավետ ծրագիրը՝ գրավոր ընթացակարգերով:

Ուսուցիչների համար, տես՝ [Cal/OSHA ցերմային հիվանդությունների կանխարգելում էջը](#), ներառյալ՝ ՅՏԳ-ը, վեբինար և գրավոր ծրագրի նմուշը: Ջերմային հիվանդությունների կանխարգելման ծրագիրը ներառում է.

- Ջրի հասանելիություն
- Ստվերի հասանելիություն
- Հոսքի արագացումներ
- Շտապ ընթացակարգեր՝ ջերմային հիվանդությունների դեպքերի համար
- Աշխատակիցների մոնիտորինգ, ովքեր ընտելանում են ջերմային այլքի ժամանակ:
- Ջերմային հիվանդությունների կանխարգելման և ախտանիշների վերաբերյալ վերապատրաստում

Բացօթյա պայմաններում աշխատող աշխատակիցներին քաջալերեք արևապաշտպան կրեմներ օգտագործել, և ընդմիջումներ առաջարկեք՝ խրախուսելու հերթափոխի ընթացքում արևապաշտպան կրեմի կանոնավոր կիրառումը:

Ցանկալի է ներդնել ժամանակացույց, որը աշխատակիցներին թույլ կտա խուսափել օրվա ամենաշոգ ժամերին աշխատելուց կամ ներդնել ժամանակացույց, որը թույլ է տալիս հաճախակի ընդմիջումներ անել՝ կանխելու աշխատակիցներին գերտաքացումից:

Նկատի ունեցեք, որ աշխատանքը բացօթյա տարածք տեղափոխելը հավելյալ վտանգներ է առաջացնում, ներառյալ՝

- Նոր էլեկտրական լարերի և երկարացման լարերի օգտագործումը կարող են մեծացնել էլեկտրական վտանգների, ներառյալ՝ հրդեհի և հոսանքահարման հավանականությունը: Ապահովեք, որ բացօթյա աշխատանքները համապատասխանեն Cal/OSHA և բոլոր օրենքների պահանջներին: Հավելյալ տեղեկությունների համար, տես՝ [Cal/OSHA's էլեկտրական Անվտանգության Ուղեցույցը](#):
- Ապահովեք, որ որ բացօթյա աշխատանքային տարածքներում լարերից կամ այլ սարքավորումների միացումներից վտանգներ չլինեն
- Բացօթյա պայմաններում աշխատող աշխատակիցներին քաջալերեք արևապաշտպան կրեմներ օգտագործել, և ընդմիջումներ առաջարկեք՝ խրախուսելու հերթափոխի ընթացքում արևապաշտպան կրեմի կանոնավոր կիրառումը
- Դադարեցրեք աշխատանքները, հեռու գնացեք էլեկտրական լարերից և սարքավորումներից և փակ տարածքում պատսպարվեք, եթե ձեր գտնվելու վայրից 6 մղոն հեռավորության շառավղով կայծակ է տեղի ունենում (տես՝ FEMA “[30/30 օրենքը](#)”):

Աշխատակիցներին արգելվում է համատեղ սնունդ կամ ըմպելիքներ օգտագործել: Աշխատակիցներին արգելվում է աշխատավայրի ներսում ուտել կամ խմել, բացառությամբ՝ ընդմիջումների համար հատկացված տարածքների՝ համոզվելու, որ աշխատակիցները հետևողականորեն ու ճշգրիտ կերպով կրում են դիմակներ:

Մաքրող և ախտահանող միջոցներ օգտագործող աշխատակիցները կրում են ձեռնոցներ և այլ պաշտպանիչ միջոցներ, ինչպես պահանջվում է ապրանքի ցուցումներով:

Ախտահանիչները և այլ պարագաները հասանելի են աշխատակիցների համար հետևյալ վայր(եր)ում.

Ձեռքերի ախտահանման՝ COVID-19-ի դեմ արդյունավետ միջոցը բոլոր աշխատակիցների համար հասանելի է հետևյալ վայր(եր)ում՝

Յուրաքանչյուր աշխատողի տրամադրվում է իր սեփական գործիքները, սարքավորումները, աշխատանքային պարագաներն ու սահմանված տարածքը: Ձեռքերին հավոդ իրերի համատեղ օգտագործումը նվազագույնի է հասցվում կամ բացառվում:

- Հնարավորության սահմաններում այս արձանագրությունն ու Հանրային Առողջապահության Վարչության՝ Կորոնավիրուսի կայքից ներբեռնած COVID-19-ին վերաբերող այլ կոյությունները տրամադրվում են բոլոր աշխատակիցներին իրենց լեզուներով:
- Աշխատողները ընդգրկվում և աջակցվում են որպես կոլեգաներին ուսուցանողներ՝ ամրապնդելով ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման հրահանգների կատարումը:
- Այս ցուցակում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի աշխատանքային պայմաններին վերաբերող քաղաքականություններից, վերաբերում են նաև առաքման անձնակազմին և ցանկացած այլ կազմակերպության, որոնք կարող են տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- Այս արձանագրության պատճեն բաժանվել է յուրաքանչյուր աշխատակցի:
- Ընտրովի—Նկարագրել այլ միջոցառումները:

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Իրականացվում են միջոցառումներ՝ աշխատողների և հաճախորդների միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն ապահովելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ մատուցվում են սերտ շփում պահանջող ծառայություններ: Այս միջոցառումները ներառում են ֆիզիկական պատնեշներ կամ տեսողական ցուցանակներ (օր.՝ հատակի գծանշաններ, գունավոր ժապավեններ կամ նշաններ, որոնք ցույց կտան, թե որտեղ պետք է կանգնել աշխատողները/հաճախորդները):
- Բացօթյա ընդունարան ստեղծեք, որտեղ հաճախորդները կարող են գրանցվել՝ միաժամանակ հետևելով ֆիզիկական հեռավորության պահպանման ցուցումներին: Ընդունարաններում կամ այլ տարածքներում, որտեղ հնարավոր չէ պահպանել ֆիզիկական հեռավորություն, օգտագործվում են պատնեշներ (օրինակ՝ պլեքսի ապակի)՝ աշխատակիցների և հաճախորդների շփումը նվազագույնի հասցնելու համար:
- Ժամադրությունները հերթով են՝ նվազեցնելու ընդունարանում կուտակումները և ապահովելու բավարար ժամանակ՝ յուրաքանչյուր հաճախորդի այցից հետո պատշաճ մաքրման և ախտահանման համար: Առանց ժամադրության այցերը չեն թույլատրվում:
- Խուսափեք բացօթյա սրահի տարածքում հաճախորդների հերթերից, և ցանկալի է, որ անձնակազմից մեկը կանգնի բացօթյա սրահի մուտքի մոտ՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- Հնարավորության դեպքում օգտագործվում է գրանցման վիրտուալ տեխնոլոգիա, որն աշխատակիցներին ծանուցում է՝ երբ հաճախորդ է ժամանում: Հաճախորդներին խնդրում են մնալ իրենց ավտոմեքենաների մեջ սպասման տարածքներում սպասելու փոխարեն: Սպասման տարածքները պետք է փոփոխության ենթարկվեն՝ հնարավոր դարձնելու պատշաճ ֆիզիկական հեռավորության պահպանումը, այդ թվում՝ աթոռներն ու բազմոցները հանելու կամ դրանք միմյանցից հեռացնելու միջոցով: Դրում սպասող անձինք պետք է միմյանցից պահպանեն վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- Աշխատողները միանգամից չեն ընդունում մի քանի հաճախորդի: Մեկ հաճախորդի ծառայություններն ավարտվում են այն բանից առաջ, երբ նույն աշխատողը նոր հաճախորդի է ընդունում:
- Աշխատակիցներին հանձնարարվում է խուսափել ձեռքսեղմումներից, գրկախառնություններից կամ ողջույնի նմանատիպ ձևերից, որոնք խախտում են ֆիզիկական հեռավորությունը:
- Աշխատակիցներին խորհուրդ է տրվում չհավաքվել բազմամարդ տարածքներում:
- Աշխատողների զուգարաններում, ընդմիջումների տարածքներում և այլ ընդհանուր

HOA.102998938.1

տարածքներում թույլատրվող մարդկանց թիվը սահմանափակվում է՝ թույլ տալու ֆիզիկական հեռավորության պահպանումը: Իրականացվում է այս տարածքների ձևափոխում՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը հնարավոր դարձնելու համար:

- Վերանայվում է աշխատանքային գործընթացը, և կատարվում են փոփոխություններ՝ պիկապների և առաքումների ընթացքում ֆիզիկական հեռավորության պահպանման համար: Տեղադրվում են դարակներ, արկղեր, տեղեկատու ցուցանակներ ու փոխանցման այլ միջոցներ՝ խուսափելու գնումների ձեռքից ձեռք փոխանցումից:
- Անձնակազմի ժողովներն անցկացվում են այնպիսի տարածքում, որտեղ հնարավոր է պահպանել ֆիզիկական հեռավորություն, կամ անցկացվում են հեռախոսով կամ վեբինարների միջոցով:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Սրահի ծառայությունները պետք իրականացվեն բացօթյա: Բացօթյա աշխատանքները կարելի է իրականացնել հովանոցի տակ կամ արևից պաշտպանված այլ տարածքում, բայց հովանոցի և արևապաշտպան ապաստարանի կողքերը չպետք է փակ լինեն և պետք է լինի դրսի օդի բավարար շարժում: Այն ծառայությունները, որոնք անվտանգ կերպով չեն կարող իրականացվել բացօթյա պայմաններում, չեն թույլատրվում, մինչև սրահները կվերսկսեն շինությունների ներսում աշխատանքը:
 - o Աշխատակիցներին թույլատրվում է սրահի ներսի տարածք մտնել՝ ապրանքներ վերցնելու, սարքավորումներն ախտահանելու, զուգարաններից օգտվելու, ընդմիջումներ անելու կամ ցանկացած այլ կարևոր աշխատանքային գործառույթներ իրականացնելու նպատակով: Սրահի հաճախորդները որևէ ժամանակ, կամ որևէ պատճառով չեն կարող սրահ ներս մտնել:
 - o Ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգը պատշաճ աշխատանքային վիճակում է, իսկ օդափոխությունն առավելագույնս բարելավվել է ընդհանուր տարածքներում և հյուրերի սենյակներում:
 Աշխատեք տեղադրել բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքեր՝ թարմացնելով շենքի օդային ֆիլտրերը մինչև հնարավոր ամենաբարձր արդյունավետությամբ, ինչպես նաև կատարել այլ փոփոխություններ՝ դրսի օդի քանակը և օդափոխությունը գրասենյակներում, հյուրերի սենյակներում ու այլ տարածքներում ավելացնելու համար:
- Այն հաստատություններում, որոնք չեն շահագործվել, պետք է տաք և սառը ջրի հարմարանքներից յուրաքանչյուրը վերաբացումից 5 րոպե առաջ հոսեցնել՝ հաստատության խողովակների հին ջուրը փոխարինելով թարմ և անվտանգ ջրի պաշարով:
- Այցից առաջ կապվում են հաճախորդների հետ՝ ժամադրությունը հաստատելու և խորհուրդ տալու/խնդրելու հետևյալը.
 - o Բերել և այցի ընթացքում օգտագործել դիմակ (նախընտրելի է՝ ականջակալներով):
 - o Մեքենայում սպասել՝ մինչև իրենց ժամադրության ժամը:
 - o Հանդիպմանը մի բերեք ընկերների, հյուրերի, դիտողների կամ այլ մարդկանց:
 - o Հարցնել, թե արդյո՞ք նրանց կամ տան որևէ անդամի մոտ կան COVID-19-ի ախտանշաններ: Եթե հաճախորդը դրական պատասխան է տալիս, փոխեք ՝ ժամադրության օրը:
- Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում են, որ նրանք հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում դեմքի ծածկոցներ կրեն (բացառությամբ՝ ուտելիս կամ խմելիս, եթե կիրառելի է): Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այդ պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանը աջակցելու համար, դեմքի ծածկոցներ պետք է տրամադրվի այն այցելուներին, ովքեր ժամանում են առանց դրանց:
- Հնարավորության դեպքում գրանցամատյանում պահպանեք բոլոր հաճախորդների կոնտակտային

տվյալները (անուն, այցի ամսաթիվը/ժամը, հասցեն, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն): Սա կարող է արվել գրանցման ժամանակ:

- Իրականացվում է ախտանիշների ստուգում՝ նախքան այցելուներին կթուլյատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ առցանց ստուգման համակարգներով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [նշանների](#) միջոցով, որոնք նշում են, որ այդ ախտանիշներով այցելուները չպետք է հաստատություն մտնեն:
 - o Եթե հաճախորդի մոտ կան որևէ ախտանշաններ, նա հիվանդ է եղել կամ շփվել է որևէ հիվանդի հետ, ապա ժամադրությունը հետաձգվում է առվազն 14 օրով:
 - o Ստուգման ժամանակ և՛ ստուգողը, և՛ հաճախորդը պետք է դիմակներ կրեն:
- Այն ծառայությունների ընթացքում, որոնք պահանջում են ձեռնոցների կրում, պետք է մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ կրել: Ձեռնոցների կրումը պետք է լինի ձեռքերի լվացմանը համատեղ, այլ ոչ թե փոխարինի դրան:
- Տարբեր հարմարությունները, այդ թվում՝ ամսագրերը, գրքերը, սուրճը, ինքնասպասարկման կետերը և հաճախորդների համար նախատեսված այլ առարկաները հեռացվել են ընդունարանի տարածքներից:
- Ձեռքերի ախտահանիչները, ախտահանող անձեռոցիկներն ու աղբարկղերը հաճախորդների համար հասանելի են սպասման տարածքներում և աշխատանքային կայաններում:
- Աշխատողներն օգտագործում են պահանջվող պաշտպանիչ բոլոր միջոցները, այդ թվում՝ աչքերի պաշտպանիչ միջոցներ և ձեռնոցներ, երբ դրանք անհրաժեշտ են ծառայության համար:
 - o Աշխատողները պետք է ամբողջ ժամանակ կրեն դիմակներ: Նրանք պետք է կրեն նաև դեմքի վահաններ, երբ մատուցում են այնպիսի ծառայություններ, որոնք հաճախորդին հնարավորություն չեն տալիս դիմակ կրել:
 - o Գործի ընթացքում և յուրաքանչյուր հաճախորդի սպասարկումից հետո բոլոր գործիքների ու մակերեսների մաքրման և ախտահանման ժամանակ պետք է կրել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- Հաճախորդները պետք է դիմակ կրեն հաստատության ներսում գտնվելու ողջ ընթացքում, բացառությամբ՝ այն ժամանակ, երբ պետք է հանել դիմակը դեմքի այդ մասն ընդգրկող ծառայությունների մատուցման համար: Կտորե դիմակներ չպետք է կրեն 2 տարեկանից ցածր տարիքի երեխաները, շնչառական խնդիրներ ունեցող անձինք և նրանք, ովքեր ի վիճակի չեն առանց օգնության հանել դիմակը կամ կտորե դեմքի ծածկոցը: Այն անձիք, ովքեր իրենց բուժաշխատողից կտորե դիմակ չկրելու ցուցում են ստացել, ազատված են այդ պահանջից: Հնարավորության դեպքում կտորե դիմակներ պետք է տրամադրվեն այն այցելուներին, ովքեր ժամանում են առանց դրանց:
- Աշխատողների համար կան մաքուր դիմակներ, որպեսզի կեղտոտվելու դեպքում հնարավոր լինի փոխել դիմակը հերթափոխի ընթացքում: Հնարավորության դեպքում մաքուր դիմակներ են առաջարկվում հաճախորդներին, եթե նրանց դիմակները կեղտոտվում են:
- Աշխատողներին տրամադրվում են մաքուր, լվացվող կամ մեկանգամյա օգտագործման խալաթներ, որոնք փոխարինվում են նորով՝ յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- Մշակվել է մաքրման և ախտահանման պլան հետևյալ առարկաների ու տարածքների համար:
 - o Բազմամարդ տարածքները:
 - o Ընդհանուր տարածքները և առարկաները, որոնց հաճախակի են դիպչում (օր.՝ սեղանները, դռների բռնակները, վարդակները, հեռախոսները), որոնք պետք է աշխատանքային ժամերին ժամը մեկ ախտահանվեն Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչներով:
 - o Բոլոր բռնակները, խողովակները, ցողելու ցնցուղները և այլ իրերը՝ յուրաքանչյուր հաճախորդից առաջ և հետո:
 - o Վճարման բոլոր պորտալները, կրեդիտ քարտերը կարդացող սարքերը, գրիչներն ու

ստիլուսային գրիչները՝ յուրաքանչյուր օգտագործումից հետո:

- Օգտագործվում են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված հիվանդանոցային կարգ ունեցող ապրանքներ՝ մաքրելու և ախտահանելու համար այն ամենը, ինչի հետ շփվել է հաճախորդը, այդ թվում՝ բուժման սեղանները, դեմքի հենման միջոցները, աթոռները և այլն: Կոնտակտային ժամանակի համար՝ հետևեք արտադրողի խորհուրդներին:
- Յուրաքանչյուր հերթափոխի ժամանակ նշանակվում է մեկ աշխատակից, որն ահրաժեշտության դեպքում կվերահսկի և կիրականացնի մաքրման և ախտահանման լրացուցիչ աշխատանքներ:
- Իրենց հերթափոխի ընթացքում աշխատակիցներին ժամանակ է տրամադրվում մաքրման աշխատանքների համար: Մաքրման աշխատանքները հանձնարարվում են աշխատանքային ժամերի ընթացքում և կազմում են աշխատողի աշխատանքային պարտականությունների մի մասը:
- Հաճախորդների հագուստը ղնելու համար կան կարծր մակերեսով, ոչ ծակոտկեն աթոռներ, կարծր մակերեսով մեծ զամբյուղներ կամ պլաստիկ զամբյուղներ:
- Յուրաքանչյուր հաճախորդից հետո աշխատանքի կայանների և բուժումների տարածքների բոլոր սարքավորումները պատշաճ կերպով ախտահանվում են:
 - o Ոչ ծակոտկեն առարկաները, օրինակ՝ նրբունեյի կամ մկրատ, լվացվում են տաք օճառաջրով, որպեսզի հնարավոր լինի վերացնել ցանկացած ֆիզիկական կեղտ: Դրանք պետք է պարզաջրվեն ու ամբողջությամբ չորացվեն, որից հետո առարկան ընկղմվում է Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից գրանցված ախտահանիչ հեղուկի մեջ՝ պահպանելով արտադրողի ցուցումներում հաստատված կոնտակտային ողջ ժամանակը: Կոնտակտային ժամանակի վերջում առարկաները հանվում են, պարզաջրվում ու չորացվում մաքուր թղթե սրբիչով:
 - o Էլեկտրական սարքերը, օրինակ՝ խոշորացույց LED լամպերը, սրբիչների տաքացուցիչները և Էսթետիկ սարքերը պետք է մաքրել ցողված անձեռոցիկով՝ վերացնելու ցանկացած ֆիզիկական կեղտ, որից հետո օգտագործել Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից գրանցված ցողիչ կամ անձեռոցիկ՝ պահպանելով արտադրողի ցուցումներում նշված կոնտակտային ժամանակը: Չգուշույթությամբ օգտագործեք ցողիչը, համոզվեք, որ ձեր սարքն անջատված է հոսանքից, և մի ցողեք շարժիչի մեջ:
 - o Էլեկտրոնիկայի, օրինակ՝ պլանշետների, սենսորային Էկրանների, ստեղնաշարերի, հեռակառավարման վահանակների և ATM սարքերի դեպքում մաքրեք տեսանելի կեղտը, եթե այդպիսին կա: Բոլոր մաքրող և ախտահանող ապրանքների համար հետևեք արտադրողի ցուցումներին: Կարող եք Էլեկտրոնիկայի համար օգտագործել սրբվող ծածկոցներ: Եթե չկա արտադրողի ուղեցույց, կարող եք օգտագործել առնվազն 60% սպիրտային հիմքով անձեռոցիկներ՝ սենսորային Էկրաններն ախտահանելու համար: Մանրակրկիտ ձևով չորացրեք մակերեսները՝ հեղուկի կուտակումից խուսափելու համար:
- Բուժման սեղանները յուրաքանչյուր օգտագործումից հետո պետք է ծածկվեն բուժման սեղանների համար նախատեսված թղթով, մաքուր սրբիչով կամ մաքուր սավանով:
- Սպիտակեղենը հեռացվում է (տոյնիսկ եթե հաճախորդը դրա տակ չի մտել), իսկ մահճակալը կամ սեղանը պատշաճ կերպով ախտահանվում է յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- Յուրաքանչյուր բուժական գործընթացի համար օգտագործված սպիտակեղենը, սրբիչները և այլ կտորները, այդ թվում՝ վերմակները և հաճախորդի կտորները, հեռացնելիս աշխատողները կրում են մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- Կեղտոտ սպիտակեղենն ամբողջությամբ, ներառյալ՝ սրբիչներն ու խալաթները, տեղադրվում են փակ տարայի մեջ և նորից չեն օգտագործվում, մինչև պատշաճ կերպով կլվացվեն լվացքի առևտրային ծառայության կողմից կամ լվացքի գործընթացով, ինչը ներառում է լվացքի ընկղմում առնվազն 160° F ջրի մեջ՝ առնվազն 25 րոպե տևողությամբ: Մի թափահարեք կեղտոտ սպիտակեղենը:
- Մաքուր սպիտակեղենն ամբողջությամբ պահեք մաքուր, ծածկված տեղում: Համոզվեք, որ կեղտոտ սպիտակեղենի կամ լվացքի հետ գործ ունեցող աշխատակիցները կրում են ձեռնոցներ:
- Ամբողջ հաստատությունը, ներառյալ՝ ապրանքների ցուցադրման տարածքները, առնվազն ամեն օր

մաքրվում և ախտահանվում են:

- Հնարավորության դեպքում ավելի ևս կամ այլ մեթոդների փոխարեն անհրաժեշտ է հատակները մաքրել փոշեկուլով՝ կանխելու պաթոգենների տարածումը օդում:
- «Փորձարկվող» բոլոր ապրանքները հանվել և հեռացվել են:
- Չուգարանները և ձեռքերի լվացման հարմարանքները հագեցած են օճառով, թղթ սրբիչներով և զուգարանի թղթով և ամեն օր մաքրվում ու ախտահանվում են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչով:
- Չուգարաններում բացակայում են ցանկացած ավելորդ ապրանքները, օրինակ՝ մոմեր կամ այլ պարագաներ:
- Որտեղ հնարավոր է (այդ թվում՝ զուգարաններում), տեղադրվում են առանց հպման աշխատող սարքավորումներ՝ վարակման վտանգը նվազեցնելու համար:
- Խորհուրդ է տրվում կատարել ոչ կանխիկ գործարքներ: Ողջամտության դեպքում հաճախորդներին հնարավորություն է տրվում սահեցնել իրենց սեփական կրեդիտ/դեբիտ քարտերը, իսկ քարտերը կարդացող սարքերը յուրաքանչյուր այցելուի օգտագործումից հետո մաքրվում են:
Եթե հնարավոր չէ կատարել էլեկտրոնային կամ քարտային վճարումներ, հաճախորդները վճարում են ճշգրիտ կանխիկ գումարով կամ կտրոնով:
- Ընտրովի – Նկարագրել վարակի վերահսկման խթանմանն ուղղված այլ միջոցառումներ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՂՈՒՆԳՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՍՐԱՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Հնարավորության դեմքում աշխատողի և հաճախորդի միջև ապահովվում է պլաստիկ պատնեշ, որից կտրված է մի ընդարձակ հատված, որտեղից կարելի է իջեցնել ձեռքերը կամ ոտքերը՝ մատնահարդարման կամ ոտքերի եղունգների հարդարման համար:
- Յուրաքանչյուր կայանում աշխատում է մեկ մատնահարդար, որը միաժամանակ սպասարկում է միայն մեկ հաճախորդի:
- Հաճախորդներին հանձնարարվում է ծառայության ողջ տևողության ընթացքում կրել կտորե դիմակներ:
- Երբ օդափոխությունը բավարար չէ, աշխատողներն օգտագործում են շնչառական սարքեր, որպեսզի նվազեցնեն թույլատրելի ազդեցության սահմաններից ցածր ազդեցությունը, որը սահմանված է Տիտղոս 8-ի Բաժին 5155-ում: Քիմիական ազդեցության դեպքում կիրառելի են միայն էլաստոմերային շնչառական սարքերը՝ ճշգրիտ քիմիական քարթիջների և համապատասխան ֆիլտրի զուգակցմամբ: Բացօթյա իրականացվող ոտքերի եղունգների խնամքը պետք է սահմանափակվի շարժական լոգարանների/տաշտերի օգտագործմամբ և դրանք պետք է մաքրվեն և ախտահանվեն Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչ միջոցով, որը ըստ պիտակավորման ոչնչացնում է մանրէները, սնկերը և վիրուսները : Խառնուրդների համար՝ տե՛ս արտադրողի ցուցումները: Ախտահանումը պետք է կատարել եղունգների խնամքի սրահի ներսում, այլ ոչ թե ժամանակավոր բացօթյա տարածքում:
- Հնարավորության դեպքում օգտագործվում են մեկանգամյա օգտագործման պարագաներ: Բոլոր պարագաները, որոնք նախատեսված չեն մեկանգամյա օգտագործման համար, պետք է ամբողջովին ախտահանվեն յուրաքանչյուր հաճախորդից հետո՝ ըստ Վարսահարդարման և Կոսմետոլոգիայի Կալիֆորնիայի Խորհուրդի ուղեցույցների:
- Եթե բացօթյա սրահում օգտագործվում են օդափոխիչներ, օրինակ՝ տակդիրով օդափոխիչներ կամ ամուր ամրացվող (hard-mounted) օդափոխիչներ, ձեռնարկվում են միջոցառումներ՝ նվազեցնելու օդափոխիչներից օդի հոսքը մի մարդուց ուղիղ դեպի մեկ այլ մարդու: Եթե օդափոխիչներն անջատվել կամ հեռացվել են, վերահսկեք շոգի հնարավոր վնասները և դրանք մեղմելու քայլեր ձեռնարկեք:

- Մեկանգամյա օգտագործման բոլոր առարկաները, օրինակ՝ սովորաբար ֆայլերը, հղկաթղթի ժապավենները, մեկանգամյա օգտագործման սանդալները, ոտքերի մատներն առանձնացնող հարմարանքները և ապլիկատորներն օգտագործվում են միայն մեկ անգամ և անմիջապես նետվում են տոպրակ պարունակող և կափարիչով աղբամանի մեջ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԷՍԹԵՏԻԿ ԽՆԱՄՔԻ, ՄԱՇԿԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿՈՍՄԵՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Աշխատողները պետք է ամբողջ ժամանակ դիմակ կրեն: Նրանք պետք է դեմքի վահան կրեն, որը ներքևի եզրին շղարշ ունի, երբ խնամում են հաճախորդի դեմքի կամ վզի հատվածները, որոնք նրան թույլ չեն տալիս դիմակ կրել: Նախընտրելի են այն շղարշները, որոնք ամրանում են կզակի տակ:
- Էսթետիկ խնամքի ծառայության ողջ ընթացքում և յուրաքանչյուր հաճախորդից հետո բոլոր պարագաների ու մակերեսների մաքրման և ախտահանման աշխատանքների ընթացքում պետք է կրել մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:
- Խնամքի սենյակից դուրս գալուց առաջ աշխատողներից պահանջվում է հանել և դնել նետել ձեռնոցները, լվանալ ձեռքերը կամ ձեռքերի համար օգտագործել պատշաճ ախտահանիչ միջոց, իսկ խնամքի սենյակից դուրս գալիս դուռը բացելիս և փակելիս օգտագործել թղթե սրբիչ կամ ախտահանող անձեռոցիկ:
- Երբ մեղրամոմի ամանները դատարկվում են, և պետք է ավելացնել մեղրամոմի նոր քանակություն, մեղրամոմի մնացած մասը դատարկվում է և նոր մեղրամոմ ավելացնելուց առաջ մեղրամոմի ամանը մաքրվում և ախտահանվում է: Մեկանգամյա օգտագործման ապլիկատորներն օգտագործումից անմիջապես հետո նետվում են տոպրակով աղբամանի մեջ: Աղբամանը կափարիչ ունի և պարունակում է մեկանգամյա օգտագործման պլաստիկ տոպրակ:
- Աշխատողներից պահանջվում է ծառայություններն ավարտելուց անմիջապես հետո լվանալ իրենց ձեռքերը:
- Աերոզոլ արտադրող գործողությունները, ինչպիսիք են գոլորշիով կամ թթվածնով բուժումները պետք է դադարեցվեն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԵՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՈՉ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

- Ցանկացած ծառայության մատուցումից առաջ հաճախորդներից պահանջվում է լվանալ ձեռքերը:
- Օգտագործվում են մեկանգամյա օգտագործման դեմքի երեսպատման ծածկոցներ և/կամ սեղանը, սեղանի տաքացուցիչները, ամրացուցիչները և այլ իրերը պաշտպանվում են բարձի երեսներով, որոնք կարող են հանվել և փոխարինվել նորով յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- Դեմքի մերսումների կամ դեմքի վրա ձեռքերով արվող այլ ծառայությունների համար պետք է օգտագործել ոչ լատեքսային ձեռնոցներ:
- Դեմքի մերսում չպետք է կատարվի, եթե այն պահանջում է հանել հաճախորդի դեմքի ծածկոցը: Ձեռքերի խնամքի ծառայությունները մատուցվում են որպես ծառայության վերջին մաս:
- Աշխատողներից պահանջվում է ծառայություններն ավարտելուց հետո անմիջապես լվանալ իրենց ձեռքերը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Էլեկտրոլոգիական ծառայություն մատուցողներից պահանջվում է հաճախորդի բուժման ողջ ընթացքում կրել դիմակներ և օգտագործել մեկանգամ օգտագործման ձեռնոցներ: Նրանք պետք է դեմքի վահան կրեն, երբ խնամում են հաճախորդի դեմքի կամ վզի հատվածները, որոնք հաճախորդին թույլ չեն տալիս դիմակ կրել:
- Նրբուկները, գլանափաթեթները և ասեղները պահող կափարիչները յուրաքանչյուր հաճախորդից

HOA.102998938.1

հետո պատշաճ կերպով մաքրվում և մանրեագրվում են:

- Հնարավորության դեպքում օգտագործվում են մեկանգամյա օգտագործման զոնդերը, որոնք չեն պահանջում զոնդի ծայր կամ տարա: Եթե չեն օգտագործում մեկանգամյա օգտագործման զոնդի ծայրեր կամ տարաներ, Էպիյատորի ասեղի/զոնդի կրիչի շարժական ծայրը կամ տարան մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր հաճախորդից հետո:
- Էլեկտրոլիզի համար օգտագործվող բոլոր ասեղները մեկանգամյա օգտագործման են, նախապես փաթեթավորված և ստերիլ են, դեն են նետվում օգտագործումից անմիջապես հետո՝ սուր առարկաների համար նախատեսված տարաներում: Սուր առարկաների տարաները պետք է նետվեն կենսաբժշկական թափոնների կանոնների համաձայն:
- Ուլտրասոնիկ մաքրման միավորները, աքցանները և բոլոր տարաները, այդ թվում՝ դրանց շարժական մասերը, յուրաքանչյուր հաճախորդից հետո մաքրվում և ախտահանվում են՝ ըստ արտադրողի ցուցումների:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճեն տեղադրված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Բոլոր մուտքերի մոտ տեղադրվում է ցուցանակ, որը տեղեկացնում է հաճախորդներին, որ ժամանման պահին ստուգվելու են նրանց ախտանշանները, խնդրում է օգտագործել ձեռքերի ախտահանիչ միջոց և կրել դիմակ:
- Տեղադրվում է ցուցանակ, որը հաճախորդներին հիշեցնում է պահպանել վեց (6) ոտնաչափ սոցիալական հեռավորություն, մուտք գործելիս լվանալ ձեռքերը կամ օգտագործել ախտահանիչ միջոց, հիվանդ լինելու կամ COVID-19-ի ախտանշաններին նման ախտանշաններ ունենալու դեպքում մնալ տանը և հաղորդել ծառայության փոփոխությունների մասին: Ցուցանակները պետք է տեղադրվեն պարզ տեսանելի վայրերում, պետք է ներառեն պատկերներ և հասանելի լինեն թվային տարբերակով (օր.՝ էլ. փոստի միջոցով):
- Ցուցանակներ են տեղադրվում ցուցադրման տարածքներով՝ հաճախորդներին տեղեկացնելու, որ այն ամեն օր մաքրվում և ախտահանվում է:
- Հաստատության առցանց ազդարարները (կայքը, սոցիալական լրատվամիջոցները և այլն) հստակ տեղեկատվություն են տրամադրում հաստատության աշխատանքային ժամերի, դիմակների օգտագործման պահանջի, ժամադրություններ ձեռք բերելու քաղաքականությունների, դրսում կամ մեքենայում իրենց հանդիպմանը սպասելու, նախապես պատվիրելու, նախապես վճարելու, վերցնելու և /կամ այլ կարևոր հարցերի մասին:

E. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Առաջնահերթություն է տրվել հաճախորդների/պատվիրատուների համար կարևորագույն ծառայություններին:
- Այն գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են հեռակա կարգով առաջարկվել, արվում են առցանց:
- Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապրանքների և ծառայությունների հասանելիություն ապահովելու այն հաճախորդների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակում և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր ռիսկի տակ:

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսի սեփականատերը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար
կարող եք կապվել հետևյալ անձի հետ՝

Բիզնեսի
կոնտակտային անուն՝

Յեռախոսահամար՝

Վերջին վերանայման
ամսաթիվ՝
